



ԹԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՑԵՑԵՍԻԿԱՆ ԵՎ ԸՆԵԿԵՆ ԳԻՏԵԼԵԱՑ

ՃԱ. ՏԱՐԻ ԹԻՒ 21.

1855

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1.

ԹԱՐՈՅԱԿԱՆ

←
Խօսիլ կը սիրեա՝ թէ գործել :

ՈՒՆՉ ԴԵՌ ազգերնուս լուսաւորու-
թեանը ինչ աստիճանի մէջ ըլլալը հաս-
կըցնել ուզելավ՝ քանի մը խորհրդածու-
թիւններ ըրինք նախընթաց թերթե-
րուն մէջ, փափաքելով ցուցընելու մեր
սիրելի ազգայնոց մէկ աւելի շիտակ
ձամբայ մը յառաջադիմութեան, հա-
սաւ ձեռուրնիս մէկ նոր լրագիր մը լ' յ-
փի անունով։ Լոյս գեղեցիկ անունը
լրադրին, որ կը յայտնէ զբողին սրտին
գովլելի փափաքը ազգերնուս լուսաւո-
րութեանը, և անոր քանի մը յորդո-
րական խօսքերը որ կ' ընէ, այնպէս
սաստիկ տպաւորութիւն մը ըրաւ սըր-
տիս վրայ, որ երեակայութիւնս դար-

ձաւ ու տիսրական խորհուրդներու մէջ
յափշտակուած մնացի. կը տեսնէի առ-
ջևս աշխայժ եռանդուն երիտասարդ մը
որ քաղցրութիւնը սպառնալեզր խառնե-
լով գանգատ կ' ընէր ինծի, զաջը և ա-
չուըները երկինք վերցուցած ամենատես
արելը վկայ կանչելով, ազգին պայծա-
ռութեան ժամանակներուն և հիմա-
կուան թշուաւութեր վրայ արտասու-
քը աւուանսան երեմն 'ի վար քամելավ։
Կորագլուխ իբր յուսահատ հոն քովը
կը տեսնէի ազգին ոգին, որուն ճարտար
և հնարիմաց աշխայժը մարած, ամենազ-
գի բնական ձիրքերուն վրայ սև քող մը
ծածկած, և թշուաւութեան խրոխտ

բազկին ժանդոտած շղթային կապանքը վրան , որուն վսեմ ձակտին վրայ նկարուած կ'երեւային անցեալ և ներկայ թշուառութեան պատճառները : Ավարատէր սիրտս սաստիկ ցաւոյ մէջ , և հառաջանքիս ձայնը երկինք կը հասնէր : Եւ ահա յանկարծ երեւեցաւ առջևս զուարթագէմ պատկառելի ծեր մը . և առանց բարե մը տալու , և առանց իր ով ըլլալն յայտնելու , մէկէն սկսաւ ըսել . Այդ բնչը յուսահատ հառաջանաց ձայն է . ել հեռացու մնաքիդ առջեւէն այդ տիսուր պատկերները . անցին գնացին երեւակայութեան դարերը . ել գործէ . աշխարհիս իշխողն հիմա գործքն է . ես քեզի և ամէն ազգասիրաց աւետարեր եկեր եմ . եթէ կ'ուզէք ազգերնուդ կենդանութիւնը , ինծի մոնիկ ըրեք ու գործեցէք : Անոր համար հիմա նախ կ'ուզէմ իմաննալքու միտքդ . խօսիլ կը սիրես թէ գործել : Ես այս տեսիլքէն և այս խօսքերէն զուարթացած՝ պատախան տուի . Պատկառելի ծեր , ով ես դու . ուստի կու գաս . ովքեզ բերաւ իմ խուցս : Այս չափ հարցմունքներն որ լսեց ծերունին , պատախանեց . Իմացայ որ դու խօսիլ կը սիրես . մնաս բարով ըսելն ու ետ դառնալն մէկ ըրաւ : Այէկէն ցաւքեցի հասայ ետեւէն , աղայեցի որ դառնայ . Եկ , ըսի . ես գործել կը սիրեմ : Պատախանեց ծերունին . Այդ է ահա ազգիդ թշուառութեան մէջ մնալուն մէկ զիխաւոր պատճառը . որ գործել կը սիրեք , ու երբոր գործքը առջենիդ կու գայ , գործքը կը թողուք ու գործել տուողը քննելու զբաղելով անգործ և թշուառ կը մնաք : Եւ թէ դու գործել կը սիրես , բնչը ուրեմն գրիք ձեռքդ՝ խօսելու ետեւէ ընկեր ես . գործէ և գործել սովլրեցու :

— Կմգրելու պատճառն և ամէն ջանքս ալ այդ է :

Տ . Ես ալ իմաննալով քու միտքդ եկայ . ուստի գիտցիր որ խօսելով խօսիլ կը սովլրեցնես , գործելով գործել : Անոր համար եթէ կ'ուզես գործելը սովլրել , կամ առջենին իյնաս ու պիտի

գործես , և կամ եթէ զայդ չես կրնար՝ պէտք է որ ուրիշ գործող մը առջևնին դնես , որուն գործոցը ազգդ հետեւի :

— Այդ է ահա ամենամեծ դժուարութիւն ուրիշ գործել տալու . ես իմ ազգիս կ'ուզեմ գործել սովլրեցնել , ազգիս վիճակին նման ազգ մը չեմ գտներ , որ իրեն առջին օրինակ դնեմ :

Ծ . Ահա ես քեզի օգնելու եկայ . իմ ազգս քեզի օրինակ :

— Ո՞րն է արդեօք քու ազգդ :

Ծ . Կմազգիս անոնցը կ'ուզես սովլրիլ թէ քու ազգիդ օրինակ կը փնտուես . ես եկայ ըսելու քեզի հարկաւոր եղածը , չէ թէ ազգի և աշխարհի վրայ տեղեկութիւն մը տալու : Բայց ես քեզի իմ ազգիս վրայօք հարկաւոր եղած գիտելիքներն ըսելով՝ զազգս ալ քեզի կը յայտնեմ . զայս գիտցիր որ իմ ազգիս բաղկացնողը հանձարն է . և ազգիս առաջնորդողը գարձեալ հանձարն եղեր է : Եւ իմ ազգիս վիճակը էր ատենօք քու ազգիդ նման , որուն լուսաւորութեան դէաքերը քու ազգիդ ալ լուսաւորութիւն կրնան տալ , միայն թէ՝ եթէ կ'ուզէք լուսաւորուիլ , յանձն առնուք գործել՝ ինչ որ գործեց իմ ազգս , որուն գլխէն անցածները խիստ շատ են . վերջապէս իմ տղայութեանս ժամանակ ես տեսայ անոր սաստիկ խեղձութեան վիճակը , ուր որ ինկած երկար ժամանակ մնացեր էր :

— Ազգեօք բնչը էր քու ազգիդ այդպիսի խեղձութեան վիճակի մէջ իյնալուն պատճառը :

Ծ . Ես քեզի հարցուցի առաջ թէ խօսիլ կը սիրես թէ գործել . դու պատախանեցիր . գործել . և հիմա կը հարցնես իմ ազգիս խեղձութեան մէջ իյնալուն պատճառները . անկէ քեզի բնչը օգուտ գործելու համար : Այէզի հարկաւորն է գիտնալը թէ ինչպէս իմ ազգս իր խեղձութենէն ազատեցաւ . ասկից քու ազգիդ ալ օգուտ պիտի ըլլայ : Ունէ որ ատանկ աւելորդ հարցմունքներ պիտի լնես , ես քեզի անոր համար չեկայ , մնաս բարով :

Պահանկ ըսելով երբ դարձաւ որ եր-

թայ պատկառելի ծերունին, հասկցայ որը ընդհանուր այլ և այլ տեղեկութիւններ ամենեին չուզեր տալ, այլ միայն կ'ուզէ ծանուցանելինչ որ հիմա ազգին գործելու հարկաւոր է. անոր համար նորէն աղաշեցի որ չերթայ. ու ինչ որ պատշաճ կը դատէ զայն միայն ըսէ, ես ալ իրեն ամենեին նոր հարցմունք չեմ ըներ : Այս իմ խօսքիս մեծ հաճութի ցըցուց ծերունին. ու դարձաւ, լլութեմն, ըսաւ, քու ազգիդ յառաջադիմութիւնը սիրողներուն հարկաւոր է գիտնալ թէ իմ ազգս ինչով էր խեղչ, և ինչպէս ելաւ իր խեղճութենէն և պայծառացաւ. որպէս զի իմանաք ձեր ազգին խեղճութեան պատճառներն ալ և գիտնաք հիմա ինչ ընելլիքնիդ. և որովհետեւ ձանաշմունքնիդ բացուեր է և գործել կը սիրէք, գործէք. և ազգերուդ թշուառութեան ժամագոտած շղթաները խորտակէք, և իր բնական ձրից վրայի սե քօղը պատռէք, որ այդպիսի ազնիւ ազգ մը որ իր հնութեամք և երեւելի ձրիւք ձոխացեալ՝ կրնայ անուանիլ Ո՞այր ազգաց, մերկանայ իր խեղճութենէն, և 'ի մէջ լուսաւորեալ ազգաց բազմի իրեն արժանաւոր կարգին մէջ :

Այս գիտնաս որ իմ ազգս խեղճութեան մէջ պահողներն ասոնք էին, տգիտութիւն, աղքատութիւն և երկապատակութիւն : Կարծեմ քու ազգիդ խեղճութեան պատճառներն ալ ասոնք են : Իմ ազգիս տգիտութիւնը այնչափ սաստիկ էր՝ որ մարդկային բնական հանձարը ինք իրեն ինչ կը ցուցընէ մարդուս, այն միայն մնացեր էր ազգին մէջը. աւելցուր ասոր վրայ նաև բնական նախապաշարմունքներ երկարժամանակեայ տգիտութենէն առաջ եկած : Իսկ աղքատութիւնը այն աստիճանի էր, որ և ոչ մէկ դիւրութեան, հանգստութեան կամ վայելցութեան դործի մը ետեւէ կրնար ըլլալ. թէպէտ տգիտութեամբը ձանաշմունք ալ չունէր այդպիսի բանի մը ետեւէ ըլլալու. այնպէս որ՝ միայն ողջ մնալու համար ուտելու հացը հազիւ կրնար գտնել. ըստ այսմ իմացիր զգեստնին ալ և բնակարաննին

ալ : Իսկ տգիտութենէ առաջ եկած երկապատակութիւնն ալ ազգիս մէջ այնչափ զօրացեր էր՝ որ իբր անկարկատելի բաժանմունք մը մէջերնին եղած էր, և ազգը իրեքի բաժնուած այլ և այլ կրօնական կարծիքներով . թողուրիշ մանր մունր մէջերնին տիրած հակառակութիւնները : Այս ովկ կրնար յուսաւ թէ այսպիսի ընկած ազգ մը կարենայ պիտի նորէն սուք ելլելու լուսաւորեալ ազգի կարգ մանել : Այս սակայն քիչ տարուան մէջ եղաւ . բայց չէ թէ խօսելով, այլ գործելով : Այս մինչ դեռ այսպիսի խեղճութեան մէջ էր իմ ազգս, դրացի ազգաց հետ վարուսղքանի մը անձինք տեսնելով անոնց կատարելութիւնները՝ սկսան ձանձնալ իրենց խեղճութիւն՝ ու փափաքիլ կարգաւորելու, և սկսան ջանալու : Այս ուրիշներն ալ անոնց նայելով, լսելով և տեսնելով, յորդորուեցան հնարք մտածելու որ ազգին խեղճութեանը օգնեն : Այսպէսով ազգին գրւ խաւոր անձանց մէջ մտաւ մէկ ազգասիրական հոգի մը . որոնք սկսան ձանձնալ թէ ազգին բովանդակութեան թըշուառութեան պատճառն է տգիտութիւնը, ուսկից առաջ կու գայ աղքատութիւն և երկապատակութիւն : Ուստի ազգին տգիտութիւնը վերցընելու ջանք մըն է մտաւ գլխաւորաց սրտին մէջ : Այս հասկրնալով որ դպրոցներն ու գլքերն են տգիտութեան արմատը ջնջելու միջոցը, մեծ եռանդով սկսան ետեւէ ըլլալ դպրոցներ բանալու և գրքեր տպագրել տալու : Բայց քիչ ատենէն իմացան որ անկատար ուսմունքով և առանց ընտրութեան տպագրութիւր առաջ տանելով տգիտութեան կը յաջորդէ իմաստակութիւն, որ տգիտութենէն գէշ երկարաւակութիւնը կ'արմատացնէ սրտերուն մէջ, ատելութիւնը կը սաստկացընէ, և բաժանմունքները ամենեին անյօդելի կ'ընէ . և այն պատճառաւ ազգին ընդհանրութեանը աղքատութեանն ալ օգուտ մը չկրնար ընել : Այսկից իմացան որ դպրոց բանձնին մարդկութիւն սորվելու արուեստին գործարանն է, որն որ առանց հմուտ վար-

ժապետի ոչ միայն անօգուտ, այլև վնասակար ալ է . նոյնպէս տպագրութիւնն ալ եթէ ընտրութեամբ չըլլայ, վնասակար խօսակցութիւն լսելէն հազար անդամաւելի չարէք կը գործէ : (Օ ասոնք մտածելով՝ ազգին օգնելու անհնարին դժուարութիւն մը առջևնին կը տեսնէին, կը մտածէին որ միաբանին ու աշխարհին մէջ գլխաւոր տեղուանք մեծամեծ վարժարաններ բանան ու դրացի կրթեալ ազգերէն անուանի վարժապետներ բերել տան . բայց այս ըլլալու բան չէր . որովհետեւ օտարազգի մարդորչափ ալ իմաստուն և խոհական ըլլայ, լեզու չփիտեր, ազգին սովորութիւնները, հնութիւնները չփիտեր . ազգային ոգի չունի, որով այդպիսի առաջնորդութիւն մը որչափ և իմաստուն ըլլայ՝ ազգին օգտակար չկրնար ըլլալ : Իսկ թէ որ ազգին մէջէն ուզեն փնտուել գտնել այդպիսի առաջնորդութեան յարմար անձինք, անոր ալ ազգը չմիաբանիր . որովհետեւ այն ընտրուած անձինքը կրօնական կարծեօք կը տարբերին ազգին մէկալ երկու մասէն, անոր համար մէկին առաջնորդութիւնը մէկալնոնց անհաճոյ կ'ըլլայ :

Այսպէս իմ ազգիս մէջէն խոհական ները տարակուսած մնացին . և ուրիշներն ալ ամէն մէկը իր կողմը մէկալնոց դէմ զօրացընելու ջանքով, և մէկ կողմանէ տգիտութեն վնասակար սկզբունքներ ազգին մէջ խոթելով շատ մը աշխատելէն ետքը, ազգին ոչ աղքատութեր, ոչ տգիտութեր և ոչ ալ երկապառակութերնուազելուն օգուտ մը կրնային ընելու . մանաւանդ թէ ան քիչ սովորզներուն տգիտութիւնը չարամտութեան կը փոխուէր, և երկապառակութիւնը աւելի կը հաստատուէր : Իսկ ազգին մէջէն խոհական անձինք տեմնելով այն նուազանկատար ուսմանց վնասները, որոնցմով երիտասարդաց աջըլ չարութեան կը բացուէր, խիստ կը ցաւէին ու ձարը մտածելէն չէին դադրեր : (Օր մը ըստ դիմաց մէկ տան մը մէջ հանդիպեցան քանի մը խոհական անձինք, որոնց մէջ կը գտնուէին իրեք տեսակ կարծեաց

հետեւողներէն ալ . հոն սկսան խօսիլ ազգին ընդհանուր խեղջութեանը վըրայ . և ամենուն բերամնը կը լսուէր փափաք երկապառակութեան կարծիքները վերցընելու, և ազգին խեղջութեանը օգնելու : Այս ատեն մէջերնէն ԱՅ, դարձաւ ըսաւ . Պարոններ, ահա մենք հո ժողովեր ենք, ամէնքնիս ալ բարեսէր և փափաքող ազգերնուս աղէկութեանը . բայց մինչդեռ մենք կ'ուզենք վերցնել ազգերնուս մէջէն երկապառակութիւնը, մենք ևս մէջերնիս երկապառակած ենք մարդկութեան ամենահարկաւոր, գլխաւոր մասին մէջ, այսինքն կրօնական կարծեաց մէջ . և չուզելով զիրարնախտատել, փոխանակ կարծիքնիս միաբաննելու, կ'ըսենք թէ կը բարօնական կարծիքը թողունք ազատ ամենուն, ու ազգերնուս միաբան առաջնորդենք . բայց ահա կը տեսնենք որ այդ յաջողելու բան չէ . վասն զի կրօնական կարծեաց տարբերութիւնը բնական խորշում մը կը բերէ ազգայնոց սրտին մէջ, որով անկարելի կ'ըլլայ ազգին յառաջադիմութեանը միաբան ջանքով աշխատիլը :

Իս այս բանիս վրայ երկար մտածելով, վերջապէս համոզուեցայ . որովհետեւ մարդուս ամենէն առջի հարկաւոր բանը կրօնքն է . ասոր մէջ երկապառակ ըլլանուս պէս, ուրիշ բաներու մէջ ոչ երբէք միութիւն և յաջողութիւն կ'ըլլայ : Աւ զարմանք բան մըն է այս . հետմա թողունք ամեռողջ ազգերնիս . մենք զմեզ միայն մտածենք . մենք հոն հիմանը հոգի ենք, ամէնքնիս ալ ազգերնուս բարիքն ուզող, ամէնքնիս ալ կրօնքին շխտակը միստուող . ամէնքնիս ալ ամէնքանին աղէկը թէ մեր անձին և թէ ուրիշներուն համար ընտրող . ամէնքնիս ալ մէկ ազգ և իրարու բարեկամ, միաբան, միախորհուրդ, և ամէն բան մեր անձանց պէս իրարու համար ալ կ'ուզենք . և ամէնքնիս ալ մէկմէկու վրայ համարմունք ունինք իբրև խոհամարդ . և սակայն կրօնքի վրայ եկածին պէս՝ իրարմէ կը տարածայնինք, իրարու մտածածին և ըսածին չենք